ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Արփունքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Ֆիզկուլտուրա>> (18 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթներն անցկացվում են երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշրի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում(Ձև 1),

-մեկ լուսանկար 3×4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),/միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ/,

-անձը հաաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/և աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից

-ինքնակենսագրություն(Ձև5)

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացինները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում) ,

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

-ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր

ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն/ մասնակցած լինելու դեպքում/:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղտերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ նոյեմբերի 9-ից մինչև նոյեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի նոյեմբերի 30-ին ժամը 15:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Արփունքի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098)51-42-02 հեռախոսահամարով: